# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 նոյեմբերի 2016 թվականի N 106-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբեր2-ի նիստի N 1 արձանագրության, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1.Հաստատել Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2016թվականի նոյեմբեր2-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2.<<Քաջարան-Կապան>>, <<Սիսիան-Գորիս>>, <<Սիսիան-Բռնակոթ>>, <<Սիսիան-Անգեղակոթ -Շաղաթ-Բարձրավան>> երթուղիների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2016թ.նոյեմբերի 3
ք.Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի
Նոյեմբերի 3-ի N 106 -Ա որոշման

# Արձանագրություն N 1

ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2 նոյեմբերի 2016 թվականի N 1 նիստի

Օրակարգում – ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2016 թվականի հոկտեմբերի 31-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով հինգ անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Վ. Դավթյան:

Լսեցին – ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2016 թվականի հոկտեմբերի 31-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակցների ներկայացրած հայտերը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը որոշում է.

1.Հաղթող ճանաչել <<Կապանի ԲՈՒԱՏ>>փակ բաժնետիրական ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.

1.1<<Քաջարան-Կապան>> ավտոմեքենաների մակնիշը՝«ASHOK LEYLAND», պետհամարանիշը՝ 1025L, «ՊԱԶ2423400», պետհամարանիշը՝ 853SU51, «ՊԱԶ2423400» 852SU51:

2.Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր Արամ Վարդանյանին ներմարզային հետևյալ երթուղում.

2.1 <<Սիսիան-Գորիս>> ավտոմեքենայի մակնիշը՝ <<ՖՈՐԴ>> պետհամարանիշը՝ 290L938 :

3.Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր Արեն Վարդանյանին ներմարզային հետևյալ երթուղում.

3.1 <<Սիսիան-Բռնակոթ>> ավտոմեքենաների մակնիշը՝ <<ԳԱԶ32213>> պետհամարանիշը՝ 35CG978, <<ԳԱԶ32213>> պետհամարանիշը՝ 35LV489 :

4.Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր Մերի Ազարումյանին ներմարզային հետևյալ երթուղում.

4.1 <<Սիսիան-Անգեղակոթ-Շաղաթ-Բարձրավան>> ավտոմեքենայի մակնիշը՝ <<ԳԱԶ32213>> պետհամարանիշը՝ 34DS329 :

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները՝ կողմ՝5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ Վ.Դավթյան

անդամներ Ռ. Ավետիսյան

Ս. Աղաբեկյան

Ա.Ասրյան

Ս.Ավետիսյան